ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2023թ.

Բովանդակություն

1	2022թ. հունիս ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) շրջանավարտների հարցման արդյունքների վերաբերյալ	2
2	2022թ. հուլիս ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման արդյունքների վերաբերյալ	5
3	2022թ. հունիս ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) ուսանողների պրակտիկայի արդյունքների վերաբերյալ	8
4	2022թ.նոյեմբերի ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) ֆոկուս խմբի անդամների և ԱՊԷՔ-ի ուսանողների հանդիպման արդյունքների վերաբերյալ	10
5	2022թ.դեկտեմբեր ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) ֆոկուս խմբի անդամների և ԱՊԷՔ -ի դասախոսների հանդիպման արդյունքների վերաբերյալ	12
6	2022թ.դեկտեմբեր ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) ֆոկուս խմբի անդամների և ԱՊԷՔ-ի կառավարման խորհրդի ներքին շահակիցների հանդիպման արդյունքների վերաբերյալ	15
7	2022թ. դեկտեմբեր ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) կառավարման խորհրդի անդամների աշխատանքի հարցման վերաբերյալ	17
8	2022թ. հունվար ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) դասավանդման որակի և արդյունավետության գնահատման ուսանողական հարցման վերաբերյալ	19
9	Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի արդյունքների վերաբերյալ	20
10	Եզրակացություններ	25

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022թ. հունիս ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) շրջանավարտների հարցման արդյունքների վերաբերյալ

ԱՊԷՔ-ի Կրթության որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Որակի կենտրոն)՝ 2022թվականի հունիս ամսին իրականացրել է հարցում ՝քոլեջի ավարտող ուսանողների շրջանում: Հարցումը իրականցվել է Որակի կենտրոնի պատասխանատուի կողմից նախապես մշակված հարցաթերթիկի միջոցով: 2022թվականի շրջանավարտների հարցումը իրականցվել է գրավոր՝ թղթային տարբերակով:

Հարցման նպատակն էր.

1.պարզել, թե քոլեջն ավարտող ուսանողները որքանով են բավարարված քոլեջի՝ ստացած գիտելիքների, հմտությունների, կարողությունների մակարդակով,

2. պարզել, թե քոլեջն ավարտող ուսանողները որքանով են բավարարված քոլեջի՝ գրադարանի գրականության հագեցվածությունից, համակարգչային սրահներից, մասնագիտական կաբինետների կահավորանքից, լսարանային պայմաններից:

2021-2022 ուս.տարվա շրջանավարտների ընդհանուր թիվը՝ 58: Հարցումը անցկացվել է 3 խմբերում (43 ուսանող), հարցմանը մասնակցել են 37 ուսանող, որոնցից 23-ը՝ արական, 14-ը ՝իգական: Հարցման մասնակիցների տարիքային խումբը՝ 18-25: Բոլորը ուսանել են ակռա ուսուցման տարբերակով: Հարցմանը մասնակցել են «Էլեկտրամատակարարում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունների շրջանավարտները: Ըստ զբաղվածության տեսակի բաժանվում են 4 խմբի.

	Աշխատում են մասնագիտությամբ	Աշխատում են ոչ մասնագիտությամբ	Չեն աշխատում	Այլ
ԷԼՄ	1	6	-	3
ԷՀՄ	-	4	4	5
ՀՀ	1	2	10	-

Ապագա աշխատանքի գործունեության մասին հստակ պատկերացում ունեն շրջանավարտներից 84% (31), ապագա աշխատանքի գործունեության վերաբերյալ պատկերացում չունեն 11% (4), այս հարցին դժվարացել են պատասխանել շրջանավարտների 5,4% (2):

Ուսումը շարունակելու ցանկություն են հայտնել 57% (21), ուսումը շարունակելու են արտերկրում 5,4% (2), ուսումը չեն շարունակելու 5,4% (2), դեռ չեն որոշել 5,4% (2):

Այն հարցին արդյո՞ք բավարարված են

- ✓ համակարգչային սրահներից, համացանցի մատչելիությունից. դրական են պատասխանել 84% (31), չեն պատասխանել 13%, տվել են բացասական պատասխան 2,7%:
- ✓ Մասնագիտական կաբինետների կահավորանքից բավարարված են եղել 57% (21), մասամբ բավարարված են եղել 32% (12), բացասական պատասխան են տվել 8,1% (3):

Արդյո՞ք գրադարանի գրականությունը նպաստել է քոլեջում ստացած գիտելիքների ամրապնդանը դրական են պատասխանել 73% (27), բացասական՝ 24% (9):

Այն հարցին թե որքանո՞վ է քոլեջը կարողացել նպաստավոր պայմաններ ստեղծել ուսումնական գործընթացը ապահովելու համար շրջանավարտների 86%-ի (32) պատասխանը եղել է դրական , իսկ 5,4 % (2)՝ բացասական:

Դասախոսական կազմի կողմից տրված գիտելիքների կիրառելիությունը աշխատանքի մեջ հարցին, շրջանավարտները պատասխանել են՝

- ✓ լիովին կիրառելի են 57% (21),
- ✓ մասամբ կիրառելի են 27% (10),
- ✓ ընդհանրապես կիրառելի չեն 2,7% (1):

Արդյո՞ք քոլեջի ուսանողական խորհուրդը կարողացել է շրջանավարտի կողմից հնչեցված հարցերին լուծում տալ հարցին, շրջանավարտները պատասխանել են՝

- ✓ այո 54% (20),
- ✓ ոչ 24% (9):

Քոլեջում շրջանավարտների մոտ երբևէ առաջացած խնդիրների լուծումը տվել են

- ✓ ուսումնական և դաստիարակչական գծով փոխտնօրենները 24% (9),
- ✓ առարկայական հանձնաժողովի անդամները, կուրսղեկները և դասախոսական կազմը 35% (13),
- ✓ կարիերայի ուղղորդման և կրթության որակի պատասխանատուները 13% (5):

Խորհուրդ կտաք այլոց ուսումը շարունակել Քոլեջում հարցին, շրջանավարտները պատասխանել են՝

- այո 73% (27),
- ոչ 18% (7) :

Ստորև ներկայացված է հարցաշարը՝

1.Խնդրում ենք նշել Ձեր սեռը.

Արական Իգական

2.Տարիքային ո՞ր խմբին եք պատկանում.

18-25 26-30 30 և ավելի

3.Նշեք Ձեր մասնագիտության ձևը.

Հեռակա Առկա Հեռավար

4.Նշեք Ձեր մասնագիտության անվանումը.

- Էլեկտրահաղորդման գծերի տեղակայում և շահագործում
- Էլեկտրամատակարարում
- Ջերմաէլեկտրակայաններ
- Ջերմամատակարարում նջերմատեխնիկական սարքավորումներ
- Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում
- Հաշվապահական հաշվառում
- Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավակցում և շահագործում

- Վերականգնող էնրգիայի էներգետիկ կյանների մոնտաժում,նորոգում և սպասարկում

5.Զբաղվածությունը

- Աշխատում եմ մասնագիտությամբ
- Աշխատում եմ ոչ մասնագիտությամբ
- Չեմ աշխատում
- Այլ

6.Տեղեկացվա՞ծ եք ապագա աշխատանքի գործունեության մասին:

Այո Ոչ Դժվարանում եմ պատասխանել

7.Ցանկանու՞մ եք ուսումը շարունակել այլ ուսումնական հաստատություններում:Եթե այո, նշեք ուս.հաստատության անվանումը:_____

8. Բավարարվա՞ծ եք արդյոք…

8.1 Համակարգչային սրահներից և համացանցի մատչելիությունից:

Այո Ոչ Այլ_____

8.2 Մասնագիտացված կաբինետների կահավորանքից:

Այո Ոչ Մասամբ

Եթե ոչ,նշեք պատճառը:_____

9. Գրադարանի գրականությունը որքանո՞վ է նպաստում Ձեր ստացած գիտելիքների ամրապնդմանը:

Այո Ոչ

10.Լսարանային պայմանները նպաստավոր են ուսանողի ուսումնական գործընթացը ապահովելու համար:

Այո Ոչ Եթե ոչ,նշեք խնդիրը:_____

11.Դասախոսական կազմի կողմից տրված գիտելիքները որքանո՞վ են կիրառելի աշխատանքի մեջ:

Լիովին կիրառելի է Մասամբ կիրառելի է Ընդհանրապես կիրառելի չէ

12.Ուսանողական խորհրդի միջոցով Ձեր հարցերը լուծում գտել են:

Այո Ոչ

Եթե ոչ,նշեք պատճառը_____

13. Երբևէ առաջացած խնդիրների ժամանակ Քոլեջի որ կառույցն է խնդրին լուծում տվել:

- Ուսումնական մաս /Ուս. մասի գծով փոխտնօրեն, դաստիրակչական գծով փոխտնօրեն/
- Առարկայական հանձնաժողովի նախագահներ , կուրսղեկներ, դասախոսներ
- Կարիերայի կենտրոն, որակի կենտրոն

14.Խորհուրդ կտաք այլոց ուսումը շարունակել Քոլեջում:

Այո Ոչ

ՁԵՐ ԿԱՐԾԻՔԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

(Խնդրում ենք նշել խնդիրները, որոնք ըստ Ձեզ առկա են ուսումնական հաստատությունում, որոնց շտկումը կնպաստի և կբարելավի քոլեջի գործունեությունը):

_____

_____

2022թ. հուլիս ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման արդյունքների վերաբերյալ

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման հարցաթերթիկը ուս.հաստատությունում մշակվել է առաջին անգամ, որի նպատակն է բացահայտել անձնակազմի կարիքները, խնդիրները և գտնել դրանց լուծման եղանակները: Հարցաթերթիկը լրացվել է անանուն: Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 34 անդամներից հարցաթերթիկի լրացմանը մասնակցել են 31 անդամ, որից իգական՝ 25, արական՝ 6:

Մանկավարժական աշխատանքային փորձը ըստ տարիների	1-10	10-20	20-30	30-40	40-50
Իգական	10	4	3	5	3
Արական	1	2	0	3	1

Այն հարցին թե որքանո՞վ են իրազեկված ուս. հաստատության աշխատանքային գործունեությանը, հարցվածների պատասխանը հետևյալն է՝

- լիովին իրազեկված են 87% (27),
- մասամբ իրազեկված են 13% (4):

Իսկ այն հարցին թե որքանո՞վ են մասնակցում քոլեջում իրականացվող քննարկումներին (մանկ.խորհ.), միջոցառումներին, կարևոր որոշումներ կայացնելիս և խնդիրների պարզաբանմանը , դրական են պատասխանել 100% (31):

ՄԿԾ-ի մշակման, գնահատման և վերանայման գործընթացում

- մշտապես մասնակցություն են ունեցել հարցվածների 48% (15),
- գործընթացներին երբեմն մասնակցել են 35% (11),
- երբեք չեն մասնակցել 16% (5):

ՄԿԾ-ի մշակման ընթացքում հետազոտություն իրականացնողները կազմել են ընդհանուր թվի 39% (12), երբեևիցե հետազոտություն չիրականացողների թիվը՝ 55% (17), հարցին չեն պատասխանել՝ 6% (2): Հետազոտություն իրականացնելիս 13% (4) առաջնորդվել է այլ ուս.հաստատության փորձով, իսկ 35% (11) առաջնորդվել է աշխատաշուկայի ժամանակակից պահանջներով, 52% (16) հարցին չեն պատասխանել:

Որոշումներ կայացնելիս արդյո՞ք դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կողմից առաջարկված տարբերակները հաշվի են առնվում: Այս հարցին պատասխանողների 19% -ի (6) առաջարկները միշտ հաշվի են առնվել, 64%-ը (20)՝ երբեմն հաշվի են առնվել, 16%-ը (5) տրված հարցին չեն պատասխանել:Վերլուծության ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 52% (16) մասնագիտական գործունեության ընթացքում բախվել է ժամանակակից հայալեզու գրականության սակավությանը, մասնագիտական կաբինետների սարքավորումների ոչ լիարժեք և արդի լինելուն, ինչպես նաև համապատասխան դիդակտիկ նյութերի սակավությունից: Որքանո՞վ են բավարարված լսարանային պայմաններից, համակարգչային կաբինետներից և մասնագիտական կաբինետների կահավորանքից 77% (24) գնահատել է 5 բալ և ավելի (1-10 բալանոց համակարգ):

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի անդամների օտար լեզուների իմացության մակարդակը ունեցել է հետևյալ արդյունքները, որը երևում է ստորև ներկայացված աղյուսակում.

	Գրավոր			Բանավոր		
	Գերազանց	Լավ	Բավարար	Գերազանց	Լավ	Բավարար
Անգլերեն	2(6%)	9(29%)	9(29%)	2(6%)	5(16%)	13(41%)
Ռուսերեն	11(35%)	13(41%)	-	9(29%)	15(48%)	-

Քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական վերապատրաստումները կազմում են ընդհանուր վերապատրաստումների 27%, ոչ մասնագիտական վերպատրաստումները՝ 67%:Հարցման արդյունքում պարզվեց, որ մասնագիտական վերապատրաստման կարիք ունի 48% (15), մասնագիտական վերապատրաստման կարիք չունեն 32% (10), դժվարացել են պատասխանել հարցվածներից 16% (5)-ը:

ՈՒսումնառության ընթացքում առաջացած խնդիրների լուծման առաջարկներ են արվել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 58% (18)- ի կողմից, 42% (42) -ը կողմից երբևիցե առաջարկ չի եղել: Քոլեջի վարած քաղաքականությունից և գործող ընթացակարգերից լիովին բավարարած են 52% (16), մասամբ՝45% (14)-ը:

Ստորև ներկայացված է դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման հարցաթերթը.

1. Սեռը՝ ☐ Արական ☐ Իգական

2. Աշխատանքային փորձը _____
(տարի)

3. Մասնագիտությունը և որակավորումը _____
(կրթական աստիճան)

4. Համատեղություն _____
(նշել այլ ուս.հաստատություններ)

5. Որքանո՞վ եք իրազեկված ուս.հաստատության աշխատանքային գործունեությանը:

☐ Լիովին ☐ Մասամբ ☐ Դժվարանում եմ պատասխանել

6. Մասնակցում եք քոլեջում իրականացվող քննարկումներին (մանկ.խորհ.), միջոցառումներին, կարևոր որոշումներ կայացնելիս, խնդիրների պարզաբանմանը:

1. Այո ☐ 2. Ոչ☐ 3. Եթե ոչ նշել պատճառը_____

7. Որքանո՞վ եք մասնակցում ՄԿԾ-ի մշակման, գնահատման և վերանայման գործընթացին:

☐ Մշտապես մասնակցում եմ ☐ Երբեմն մասնակցում եմ ☐ Չեմ մասնակցում

8. Իրականացրե՞լ եք որևէ հետազոտություն ՄԿԾ-ի մշակման ընթացքում:

☐Այո ☐ Ոչ

9. Հետազոտություն իրականացնելիս արդյո՞ք առաջնորդվում եք.

☐1. այլ ուս.հաստատության փորձով ☐ 2. առաջնորդվում եք աշխատաշուկայի ժամանակակից պահանջներով

10. Ձեր առաջարկված տարբերակները հաշվի են առնվում որոշումներ կայացնելիս:

☐ Միշտ են հաշվի առնվում
☐ Երբեմն են հաշվի առնվում
☐ Երբեք հաշվի չեն առնվում

11. Մասնագիտական գործունեության ժամանակ ինչպիսի՞ խնդիրների հետ եք առնչվել:

_____

(նշել խնդիրը)

12. Որքանո՞վ եք բավարարված հայալեզու մասնագիտական և ժամանակակից գրականությունից:

☐ Լիովին ☐ Կիսով չափ ☐ Բավարարված չեմ

13. Որքանո՞վ եք բավարարված մասնագիտական կաբինետների կահավորանքից.

_____

(1-10 բալանոց համակարգ)

Համակարգչային կաբինետներից, համացանցի մատչելիությունից ._____

(1-10բալանոց համակարգ)

Լսարանային պայմաններից._____

(1-10 բալանոց համակարգ)

14. Որքանո՞վ եք տրիապետում օտար լեզվի (անգլերեն, ռուսերեն) գրավոր և բանավոր իմացությանը:

	Գրավոր			**Բանավոր**		
	Գերազանց	**Լավ**	**Բավարար**	**Գերազանց**	**Լավ**	**Բավարար**
Անգլերեն						
Ռուսերեն						

15. Քանի՞ անգամ եք վերապատրաստվել, դրանցից քանիսն են մասնագիտական:

_____

(նշել քանակը և տեսակը)

16.Ունե՞ք մասնագիտական վերապատրաստման կարիք:

☐ Այո ☐ Ոչ ☐ Դժվարանում եմ պատասխանել

17. Ուսումնառության ընթացքում առաջացած խնդիրների լուծման համար Ձեր կողմից առաջարկներ եղե՞լ են:

☐ Այո ☐ Ոչ

Եթե եղել են նշեք դրանք _____

_____

18. Քոլեջի վարած քաղաքականությունից և գործող ընթացակարգերից բավարարվա՞ծ եք:

☐ Լիովին ☐ Մասամբ ☐ Բավարարված չեմ ☐ Դժվարանում եմ պատասխանել

ՁԵՐ ԿԱՐԾԻՔԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

(Խնդրում ենք նշել խնդիները և կարիքները, որոնք ըստ Ձեզ առկա են ուս.հաստատությունում, որոնց շտկումը կնպաստի և կբարելավի քոլեջի գործունեությունը:)

_____

_____

2022թ. հունիս ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) ուսանողների պրակտիկայի արդյունքների վերաբերյալ

Որակի կենտրոնի կողմից 2022թվականի հունիսին մշակվել է հարցաթերթիկ ԱՊԷՔ-ի կողմից կազմակերպվող պրակտիկայի վերաբերյալ: Հարցաթերթիկը լրացվել է շրջանավարտների կողմից, որին մասնակցել են 34-ը: Պրակտիկան անց է կացվել մասնավոր և պետական կազմակերպություններում: Մասնավոր կազմակերպությունում պրակտիկա անցել է 9 շրջանավարտ, պետական կազմակերպություններում՝ 25:

Այն հարցին թե որքանո՞վ է պրակտիկայի նպատակը հստակ եղել իրենց համար 85%-ը գնահատել են 5 միավոր, 8.8%-ը՝ 4 միավոր, իսկ 5.8%-ը՝ 2 միավոր:

Տեսական գիտելիքների կատարելագործելու առումով պրակտիկայի օգտակար լինելը 1-5 միավորանոց համակարգում 88.2%-ը գնահատել է 5 միավոր , 5.8%-ը՝ 4 միավոր, իսկ 2.9%-ը՝ 3 միավոր:

Օգտակա՞ր է եղել արդյոք պրակտիկան գործնական կարողությունների զարգացման համար հարցին. 82.3%-ը գնահատել է 5 միավոր, 11.7%-ը՝ 4, իսկ 2.9%-ը՝ 1 միավոր:

Պրակտիկայի պատշաճ կազմակերպված լինելը գոհացրել է 82.3%-ին և գնահատել են 5 միավոր, 8.8%-ը՝ 4 միավոր, 3 միավոր գնահատել է հարցվածների 5.8%-ը:

Արդյո՞ք կազմակերպված պրակտիկայի տևողությունը եղել է առաջադրված նպատակներին հասնելու համար բավարար: Այս հարցին 79.4%-ը գնահատել է 5 միավոր, 8.8%-ը՝ 4 միավոր, 8.8%-ը՝ 3 միավոր:



Ստորև ներկայացված է ԱՊԷՔ-ի կողմից կազմակերպվող պրակտիկայի վերբերյալ հարցաշարը.

1. Ո՞ր կազմակերպությունում եք անցկացրել Ձեր պրակտիկան:

_____

(նշել կազմակերպության անվանումը)

2. Կազմակերպության ձևը:

Մասնավոր ☐ Պետական ☐

3. Խնդրում ենք ստորև ներկայացված ձևակերպումները գնահատել 1-5 միավորանոց համակարգով, որից 5-ը բավարարվածության ամենաբարձր աստիճանն է, իսկ 1-ը ամենացածր:

3.1. Պրակտիկայի նպատակը հստակ էր ինձ համար: _____

3.2. Պրակտիկան օգտակար էր տեսական գիտելիքների կատարելագործելու առումով:_____

3.3. Պրակտիկան օգտակար էր գործնական կարողությունների զարգացման առումով: _____

3.4. Պրակտիկան պատշաճ էր կազմակերպված: ____

3.5. Պրակտիկայի տևողությունը բավարար էր առաջադրված նպատակներին հասնելու համար: ____

4. Որքանո՞վ է արդյունավետ եղել ուսումնառության ընթացքում անցկացված պրակտիկան:

☐ 4.1.Շատ արդյունավետ է անցել:

☐ 4.2.Այնքան էլ արդյունավետ չի անցել:_____

(նշել պատճառը)

☐ 4.3.Դժվարանում եմ պատասխանել:

5. Ի՞նչը կցանկանայիք փոխել պրակտիկայի կազմակերպման և անցկացման ձևաչափում:

_____

(նշել առաջարկներ)

ՍՏՈՐԵՎ ԿԱՐՈՂ ԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՁԵՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՏՆԵԼ ՁԵՐ ԿԱՐԾԻՔԸ

_____

_____

2022թ.նոյեմբեր ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) ֆոկուս խմբի անդամների և ԱՊԷՔ-ի ուսանողների հանդիպման արդյունքների վերաբերյալ

Նախաբան

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի որակի կենտրոնի կողմից հոկտեմբեր ամսին կազմվել է ֆոկուս խումբ, որի նպատակն է՝ բացահայտելու ներքին և արտաքին շահակիցների մոտ այն խնդիրները, որոնք մնացել են ստվերում, որոնց մասին հստակ պատկերացում չի կազմվել հարցաթերթիկի լրացմամբ:

Ֆոկուս խմբի անադամները ընտրվել են քոլեջի ներքին շահակիցներից: Նախապես կազմվել է հարցաշար, որը քննարկվել է խմբի անդամների հետ:

Նախատեսվել է հանդիպում երկու խումբ ուսանողների հետ: Յուրաքանչյուր խմբում 15 ուսանող: Ուսանողների ընտրությունը կատարվել է պատահականության սկզբունքով: Հանդիպմանը մասնակցելու համար ընտրվել են երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսի ուսանողներից:

Ուսանողները նախապես տեղեկացվել են հանդիպման վայրի և ժամի մասին:

Առաջին խմբի ուսանողների հետ հանդիպումը կայացել է 22.11.2022թ. ժամը 13°°-ին, իսկ երկրորդ խմբի հետ՝ 25.11.2022թ.ժամը 13°°-ին: Առաջին խմբի 15 ուսանողներից հանդիպմանը մասնակցել են 12- ը, երկրորդ խմբի 15 ուսանողներից՝ 13-ը:

Ֆոկուս խմբի անդամների և ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ քոլեջ ընդունված ուսանողների մի մասը ընդունվել են «ԱՊԷՔ», քանի որ իրենց նախընտրած մասնագիտությունը եղել է քոլեջի մասնագիտությունների ցանկում, իսկ մյուս մասը չի ցանկացել գնալ ավագ դպրոց: Ընդունվածների մի մասն էլ դուրս է մնացել այլ ուսումնական հաստատություններից: Հանդիպումից պարզ դարձավ այն, որ ներկաների մեծ մասը շարունակելու են իրենց կրթությունը բարձրագույն ուս.հաստատություններում:

Ի՞նչ ակնկալիքներ ունեին ուս.հաստատությունից և ի՞նչը բավարարեցին. այս հարցին ուսանողների պատասխանն՝բավարարված են կիսով չափ:

Ուսանողները նշեցին այն խնդիրները, որոնք խանգարում են քոլեջում լիարժեք որակյալ կրթություն ստանալուն: Խնդիրներից նշվել են՝

- Անհարգելի բացակայություններ
- Ուսանողների ոչ լիարժեք գնահատման համակարգ
- Պրակտիկայի ժամանակի պակաս
- Լսարանային պայմանների բարելավում

Տվյալ խնդիրների շտկման ուղղությամբ եղան առաջարկներ ուսանողների կողմից.

Անհարգելի բացակաների նկատմամբ լինեն խիստ, խստությունը կիրառվի բոլոր դասախոսների կողմից:

Ոսանողները գնահատման հարցաթերթիկները չեն ընդունում որպես իրական գնահատման մեխանիզմ, նախընտրում են միջանկյալ և կիսամյակային քննությունների միջոցով ստանան իրենց գնահատականը:

Առաջարկում են լինեն հաճախակի դասալսումներ: Առաջարկում են , որպեսզի դասավանդման նյութը թելադրվի, ուսումնառության նյութի տրամադրման փոխարեն:

Ակնկալում են ուսանողական խորհրդի պարտականությունների և իրավասությունների շրջանակներում աշխատանքի ակտիվ գործունեություն:

Առաջարկում են տարատեսակ (ինտելեկտուալ,սպորտային) միջոցառումների կազմակերպումը, ոչ միայն քոլեջի խմբերի միջև, այլև այլ ուս. հաստատությունների միջև:

Առաջարկում են քոլեջում տեղադրել արկղ, որը կծառայի առաջարկությունների և դժգոհությունների համար:

Ուսանողների վերջին առաջարկությունը հաճախակի հանդիպումներ լինի քոլեջի տնօրենի հետ:

Ստորև ներկայացված է հարցաշարը.

Ինչո՞ւ եք ընտրել Աբովյանի պետական էներգետիկական քոլեջը:

1.Ինչո՞ւ եք ընտրել Ձեր մասնագիտությունը:

2.Ստացե՞լ եք մասնագիտական ճիշտ կողմնորոշում:

3.Շարունակելո՞ւ եք կրթությունը Ձեր նախընտրած մասնագիտությամբ:

4. Արդյո՞ք գոհ եք մասնագիտության ընտրությունից:

5.Ստանում եք արդյո՞ք որակյալ կրթություն:

Եթե ոչ,նշեք պատճառը:

6.Դասավանդման մեթոդները դասախոսի կողմից ընտրված նպաստում են գիտելիքի ամրապնդմանը:

7. Արդյո՞ք գոհ եք դասախոսական կազմից և դասավանդման մեթոդներից:

8. Ինչպիսի՞ խնդիրների եք բախվել ուս.պրոցեսի ժամանակ:

9.Բավարար եք համարում Քոլեջի շենքային պայմանները:

- Լսարանային
- Մասնագիտական կաբինետների
- Գրադարանի
- Դահլիճի

10. Կան դասախոսներ, որոնց ընտրված մեթոդները կամ վերաբերմունքը խոչընդոտում են ձեր ուսմանը:

11.Պրակտիկայի ժամանկ կիրառել եք Ձեր ստացած տեսական գիտելիքները:

12.Ինչպիսի՞ ձևաչափով է կազմակերպվում պրակտիկան:

13.Ինչպիսի՞ առաջարկներ ունեք պրակտիկայի որակը բարելավելու համար:

14.Ըստ Ձեզ գնահատման մեթոդներ ճիշտ են ընտրված քոլեջում:Պահպանվում է արդյո՞ք ակադեմիական ազնվությունը:

15.Ի՞նչ առաջարկներ ունեք դասավանդման մեթոդների, դասախոսների ընտրած մեթոդների, կրթության վերաբերյալ:

2022թ.դեկտեմբեր ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) ֆոկուս խմբի անդամների և ԱՊԷՔ -ի դասախոսների հանդիպման արդյունքների վերաբերյալ

Նախաբան

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի որակի կենտրոնի կողմից կազմված ֆոկուս խմբի անդամների հանդիպումը դասախոսների հետ տեղի է ունեցել 06.12.2022թ և 14.12.2022թ.: Հանդիպումը կայացել է 2 խումբ դասախոսների հետ: Դասախոսները ընտրվել են վիճակահանության սկզբունքով: Յուրաքանչյուր խմբում ընտրվել են 10 դասախոս: Առաջին և երկրորդ հանդիպումներին ներկա են գտնվել 10 դասախոսից 8-ը: Ընդհանուր առմամբ ֆոկուս խումբը հանդիպել և լսել է 16 դասախոսի:

Նախապես մշակվել և քննարկվել է հարցաշար ֆոկուս խմբի անադամների կողմից: Հարցաշարը մշակելիս հաշվի են առնվել այնպիսի խնդիրներ, որոնց հետ առնչվել է ֆոկուս խումբը ուսանողների հետ հանդիպման ժամանակ: Ընդգրկվել են այնպիսի հարցեր, որոնց պատասխանները հետաքրքրում էին ուսանողներին:

Ֆոկուս խմբի հանդիպումը դասախոսների հետ նպատակ ուներ վեր հանելու այն խնդիրները, որոնք ըստ դասախոսական անձնակազմի առկա են քոլեջում,որոնց հետ իրենք առնչվել են: Հանդիպման նպատակն էր գտնել քոլեջում առկա խնդիրների լուծման տարբերակները, լսել առաջարկներ խնդիրների վերաբերյալ:

Ֆոկուս խմբի անադամների և առաջին խումբ դասախոսների հանդիպումից պարզ դարձավ, որ ներկա գտնվող 8 դասախոսներից 5 իրազեկված չէին այն մասին, որ Քոլեջին շնորհվել է 2 տարի ժամկետով պայմանական հավատարմագրում: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ԱՊԷՔ-ում ներկա դասախոսները իրենց աշխատանքային գործունեությունը սկսել են նոր ուսումնական տարվանից, այսինքն «ԱՊԷՔ»-ում ունեն 3 ամսվա աշխատանքային փորձ:

Այդ իսկ պատճառով որոշակի հարցերի պատասխաններ ֆոկուս խմբի անդամները չկարողացան ստանալ: Առաջին խմբի դասախոսները մոդուլային ծրագրով չեն դասավանդում, հանրակրթական ծրագրով դասավանդող դասախոսներ են և մոդուլային դասընթացների վերաբերյալ առաջարկներ չունեն: ՄԿԾ -ի մշակման և վերանայման գործընթացներին չեն մասնակցել, տեսակետ որևէ հարցի կամ խնդրի վերաբերյալ չեն արտահայտել:

Անհարգելի բացակայությունները և ուշացումները համարեցին գերակա խնդիր քոլեջի համար:

Առաջարկեցին որպես գնահատման միջոց լինեն քննություններ և ստուգարքներ:

Երկրորդ հանդիպումից ֆոկուս խմբի անդամները ստացան իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, դասախոսական անձնակազմի կողմից բարձրաձայնվեցին քոլեջում առկա խնդիրները և եղան առաջարկներ այդ խնդիրների հաղթահարման ուղղությամբ:

Ներկա դասախոսները տեղյակ են հավատարմագրման գործընթացից, մասնակից են եղել ինքնավերլուծության և վերլուծության գործընթացներին, տեղեկացված են եղել, որ քոլեջին շնորհել են 2 տարի ժամկետով պայմանական հավատարմագրում:

Այն հարցին, թե ի՞նչ փոխվեց տվյալ գործընթացի ավարտից հետո, բոլորը տվեցին դրական պատասխան.

- Համակարգված աշխատանք
- Փոխադարձ տեղեկատվության տրամադրում
- Աշխատանքի հստակեցում
- Թափանցիկության բարձրացում
- Տարբեր ստորաբաժանումների միջև կապերի ամրապնդում

Հանդիպումից պարզ դարձավ, որ ներկա դասախոսները միշտ մասնակցել են քոլեջում իրականացվող միջոցառումներին,մանկ.խորհ.-ի նիստերի քննարկումներին, քննարկվող հարցերի շուրջ արտահայտել են իրենց տեսակետները, որը միշտ եղել է ի օգուտ ուսանողի:

Միշտ մասնակցել են ՄԿԾ – ի մշակման և վերանայման գործընթացներին: Նշեցին, որ մոդուլային ծրագրերը ճկուն չեն, առկա է մոդուլային աշխատանքները կազմակերպելու խնդիր: Որպես խնդրի լուծման առաջարկ եղավ քննությունների առկայությունը, քանի որ գնահատման թերթիկի միջոցով ուսանողի գիտելիքի վերաբերյալ լիարժեք պատկերացում չի կազմվում: Ուսանողի մոտ ուսման նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու համար առաջարկ եղավ, ուսանողներին ճանաչողական այցերի տանել առաջին կուրսում:

Հանդիպման ժամանակ բարձրաձայնվեց այն մասին, որ ուսանողական խորհրդը բավականին չափով չի զբաղվում իր պարտականությունների կատարմամբ: Անհրաժեշտ է կազմակերպել տարբեր ձևաչափի միջոցառումներ, որը կբարձացնի և կմոտիվացնի ուանողների մոտ սովորելու ցանկությունը:

Անհարգելի բացակայությունները կրճատելու և ուշացումներ վերացնելու վերաբերյալ եղան հետևյալ առաջարկները.

- Երկար դասամիջոցը ավելացնել կարճ դասամիջոցների ժամանակի հաշվին, որը հնարավորություն կտա ուսանողներին լուծելու իրենց սնվելու հարցը և կլուծի ուշացումների խնդիրը:
- Քոլեջի իրավասության շրջանակներում կարճ դասամիջոցների ժամանակ փակել քոլեջի մուտքի դուռը:
- Սահմանել ամենօրյա հերթապահություն դասախոսների կողմից:

Կկարողանա՞ն շրջանավարտները քոլեջն ավարտելուց հետո աշխատանքի անցնել, տեսական և գործնական պարապունքները բավարա՞ր են ուսանողին լավ մասնագետ դառնալու համար և արդյո՞ք լրացուցիչ պարապունքների կարիք չունեն հարցին, բոլոր դասախոսների պատասխանները դրական են եղել: Այսինքն քոլեջն բարձր առաջադիմությամբ ավարտելուց հետո ուսանողը կարող է աշխատանքի անցնել համապատասխան բնագավառում, կատարել այն աշխատանքը ինչը վերաբերվում է տեխնիկի որակավորմանը: Պահպանելով շրջանավարտների հետ հետադարձ կապը, տեղյակ լինելով իրենց ծավալած աշխատանքային գործունեությանը, քոլեջն տալիս է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, մրցունակ շրջանավարտ:

Ստորև ներկայացված է հարցաշար, որը մշակվել է ֆոկուս խմբի անդամների կողմից, ԱՊԷՔ -ի դասախոսական անձնակազմի հետ հանդիպման համար.

1.Իրազեկված եք արդյո՞ք, որ Քոլեջին շնորհել են 2 տարին պայմանական հավատարմագրում:

2.Որքանո՞վ եք մասնակցել Քոլեջում իրականացվող հավատարմագրման գործընթացին:

3.Ի՞նչ փոխվեց տվյալ գործընթացից հետո:

Ի՞նչ ակնկալիքներ ուներիք տվյալ գործընթացի հետ կապված : Ի՞նչը կարող եք գնահատել դրական, ինչը՝ ոչ:

4.Մասնակցու՞մ եք արդյոք Քոլեջում հրավիրվող մանկ.խորհ.-ի նիստերին, քննարկումներին, իրականցվող միջոցառումներին:

Քննարկվող հարցերի շուրջ տեսակետներ արտահայտե՞լ եք:

Հաշվի՞ է առնվել Ձեր տեսակետը, կարծիքը քննարկվող հարցի շուրջ:

5.Մասնակցե՞լ եք ՄԿԾ -ի մշակման, վերանայման գործընթացին:

6.Մոդուլային դասընթացը ըստ Ձեզ ճի՞շտ է կազմակերպված: Եվ տալի՞ս է արդյոք բավարար գիտելիք ուսանողին :

7.Կկարողանա՞ն շրջանավարտները քոլեջը ավարտելուց հետո աշխատանքի

անցնել:

Ունեք առաջարկներ տեսական և գործնական ժամաքանակների հետ կապված:

Տեսական և գործնական պարապունքները բավարա՞ր են ուսանողին լավ մասնագետ դառնալու համար, թե՞ անհրաժեշտ է լրացուցիչ պարապունքներ:

8.Պրակտիկան տալի՞ս է արդյոք գործնական հմտություններ ուսանողին:

9.Գնահատման թերթիկը տալի՞ս է բավարար պատկերացում ուսանողի գիտելիքը գնահատելու համար:

Ի՞նչ կփոխեիք ուսանողի գիտելիքի իրական պատկերը տեսնելու համար:

Այս հարցի շուրջ եղե՞լ են առաջարկներ: Եթե այո, նշեք…

10. Ինչպե՞ս եք հասկացել կամ որոշել, որ ուսանողը ստացել և յուրացրել է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիք :

11.Վերջնարդյունքին ինչպե՞ս եք հասնում, ի՞նչ մեթոդներ եք կիրառում:

12.Ձեր կողիմց որևէ դասավանդման մեթոդ կիրառվե՞լ է, որպեսզի հետաքրքրություն առաջացնի ուսանողների մոտ:

2022թ.դեկտեմբեր ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) ֆոկուս խմբի անդամների և ԱՊԷՔ-ի կառավարման խորհրդի ներքին շահակիցների հանդիպման արդյունքների վերաբերյալ

Նախաբան

Ֆոկուս խմբի անդամների և ԱՊԷՔ-ի կառավարման խորհրդի ներքին շահակիցների հետ հանդիպումը տեղի է ունեցել 21.12.2022թ.:Հանդիպման մասին կառավարման խորհրդի անդամները նախապես տեղեկացվել են: Հանդիպման նպատակն էր պարզելու արդյո՞ք՝

- Կառավարման խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներկայությունը խորհրդի նիստերում կարևորում է:
- Կառավարման խորհրդի նիստերի ժամանակ իրենց կողմից առաջարկներ կամ կարծիքներ լինում են, որքանով են իրենց կողմից արված առաջարկները և հնչեցրած կարծիքները ընդունվում այլ անդամների կողմից:
- Որպես կոլեգիալ մարմին կարողանում է լուծել իր առջև դրված խնդիրները:
- Կառավարման խորհրդի նպատակն է ռազմավարական խնդիրներին լուծում տալը:
- Կառավարման խորհրդի յուրաքանչյուր անդամ գիտակցում է իր կայացրած որոշման հետևանքը:
- Որոշումները միաձայն են ընդունվում:
- Ապահովում է կառավարման խորհրդի նիստերի թափանցիկությունը:
- Կայացրած որոշումների մասին տեղեկացվում են համապատասխան ստորաբաժանումները

Հանդիպմանը մասնակցել են կառավարման խորհրդի 11 անդամներից 5-ը:Նախապես մշակվել է հարցերի ցանկ՝ ֆոկուս խմբի անդամների կողմից:

Կառավարման խորհրդի անդամների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ

ներկա գտնվող 5 անդամներն էլ առաջին անգամ են ընտրվել կառավարման խորհրդի կազմում: Յուրաքանչյուր անդամ ծանոթացել է ԿԽ-ի իրավասություններին, իրենց իրավունքներին և պարտականություններին: Մշտապես մասնակցել են կառավարման խորհրդի կողմից հրավիրված նիստերին: Նախապես ծանոթ են եղել նիստի օրակարգին: Քննարկումների ժամանակ արտահայտել են իրենց կարծիքը տվյալ հարցի կամ օրակարգի վերաբերյալ: Յուրաքանչյուրի կարծիքը լսվել է նիստում ներկա մյուս անդամների կողմից: Պարզ դարձավ նաև այն որ, յուրաքանչյուրը գիտակցում է իր կայացրած որոշման կարևորությունը քոլեջի բարգավաճման հարցում: Որոշումները թափանցիկ են, որոշումների մասին տեղեկացվում է համապատասխան ստորաբաժանումները:

Այն հարցին, արդյո՞ք տեղյակ են 2023թ. տնօրենի նոր ընտրությանը (ծանոթ են նոր ՌԾ -ին):

Պատասխանը դրական էր, բոլորը տեղյակ են տնօրենի նոր ընտրության մասին, բայց նոր ՌԾ -ին դեռ ծանոթ չէին:

Այն հարցին, թե ի՞նչը կնպաստի կառավարման խորհրդի էլ ավելի արդյունավետ աշխատանքին:

Բոլորի պատասխանը հետևյալն է՝ կառավարման խորհրդի յուրաքանչյուր անդամի ակտիվ մասնակցությունը նիստերին:

Ստորև ներկայացված է հարցաշարը.

1.Ինչպե՞ս եք ընտրվել կառավարման խորհրդում:

Ո՞վ է առաջադրել ձեր թեկնածությունը:

2.Ծանոթացե՞լ եք ԿԽ-ի կանոնակարգին:

3.Տեղյա՞կ եք ԿԽ-ի իրավասություններին, ձեր իրավունքների և պարտականությունների մասին և խորհրդի աշխատակարգին:

4. Գիտե՞ք արդյոք ձեր գործառույթները, ԿԽ-ն ինչպիսի՞ խնդիրներ պետք է լուծի:

5.Մասնակցե՞լ եք կառավարման խորհրդի կողմից հրավիրված նիստերին:

6.Նախապես ծանոթացե՞լ եք տվյալ նիստի օրակարգին:

7. Եղե՞լ են առաջարկներ Ձեր կողմից տվյալ օրակարգի վերաբերյալ կամ տվյալ հարցի:

8. Քննարկման ժամանակ Ձեր կարծիքը հաշվի՞ է առնվել:

9.Հաշվի՞ է առնվել կառավարման խորհրդի յուրաքանչյուր անդամի կարծիքը տվյալ խնդրի լուծման ժամանակ:

Թե՞ որոշումները միաձայն են ընդունվել:

10.ԿԽ-ի նիստերին ինչպե՞ս են ներկայացվում արտաքին շահակիցների շահերը:

11.Արդյո՞ք ձեր կայացրած որոշումը նպաստում են քոլեջի բարգավաճմանը:

12.Տեղեկացվա՞ծ եք արդյոք 2023 թ. տնօրենի նոր ընտրությանը.(ծանոթացե՞լ եք տնօրենի նոր ՌԾ- ին):

13.ԿԽ-ի որոշումները թափանցիկ են (այսինքն կայացրած որոշումների մասին տեղյակ են պահվում):

14.Ըստ Ձեզ ի՞նչը կնպաստի կառավարման խորհրդի էլ ավելի արդյունավետ աշխատանքին:

Ի՞նչ առաջարկություններ ունեք:

2022թ. դեկտեմբեր ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) կառավարման խորհրդի անդամների աշխատանքի հարցման վերաբերյալ

ԱՊԷՔ -ում կառավարման խորհրդի աշխատանքի արդյունավետությունը գնահատելու համար կրթության որակի պատասխանատուի կողմից մշակվել է հարցաշար:Հարցաշարը լրացրել են կառավարման խորհրդի 11 անդամներից 8-ը:

Հարցաշարը լրացրած կառավարման խորհրդի անդամներից 2-ը նշանակվել են այլ կառույցների կողմից, իսկ՝ 6-ը ընտրվել են: Կառավարման խորհրդի անդամներից 7-ը առաջին անգամ են ընտրվել կամ նշանակվել, իսկ 1-ը վերընտրվել է: Կառավարման խորհրդի կողմից հրավիրված նիստերին 8 անդամն էլ մշտապես մասնակցել են: Բոլորն էլ նախապես տեղեկացվել են նիստի օրակարգին:

Այն հարցին արդյո՞ք առաջարկներ են եղել իրենց կողմից տվյալ օրակարգի կամ որևէ հարցի վերաբերյալ, ներկաներից 7-ը պատասխանել են այո, 1-ը՝ ոչ:

Քննարկումների ժամանակ ներկաներից յուրաքանչյուրի կարծիքը միշտ հաշվի են առնվել:

Այն հարցին արդյո՞ք կառավարման խորհուրդն իր առջև դրված խնդիրներին պատշաճ կերպով է անդրադառնում, բոլորի պատասխանը դրական էր:

Ի՞նչը կնպաստի կառավարման խորհրդի էլ ավելի արդյունավետ աշխատանքին, այս հարցին բոլոր նույն պատասխանն են տվել «յուրաքանչյուր մասնակցի ավելի ակտիվ մասնակցությունը խորհրդի նիստերին»:

Ստորև ներկայացված է հարցաշարը.

1. Ինչպե՞ս եք ընդգրկվել կառավարման խորհրդում:
   - Այլ կառույցների կողմից նշանակման միջոցով
   - Ընտրության միջոցով
2. Կառավարման խորհրդի կազմում ընդգրկված եք՝
   - Առաջին անգամ
   - Վերընտրվել եք
3. Մասնակցե՞լ եք կառավարման խորհրդի կողմից հրավիրված նիստերին:
   - Այո
   - Ոչ (նշեք պատճառը) _____
4. Նախապես ծանո՞թացել եք տվյալ նիստի օրակարգին:
   - Այո
   - Ոչ
   - Մասամբ
5. Եղե՞լ են առաջարկներ Ձեր կողմից տվյալ օրակարգի կամ որևէ հարցի վերաբերյալ:
   - Այո
   - Ոչ
6. Քննարկման ժամանակ Ձեր կարծիքը հաշվի առնվե՞լ է:
   - Այո
   - Ոչ(նշեք պատճառը)_____
   - Մասամբ
7. Ի՞նչ ռազմավարական նշանակության խնդրի լուծում է տրվել վերջին նիստի ժամանակ:

_____

_____

8. Արդյո՞ք հաշվի է առնվել Կառավարման խորհրդի յուրաքանչյուր անդամի կարծիքը որևէ խնդրի լուծման ժամանակ:

- Այո
- Ոչ(նշեք պատճառը)_____
- Որոշումներն ընդունվել են միաձայն:

9. Ըստ Ձեզ Կառավարման խորհուրդն իր առջև դրված խնդիրներին պատշաճ կերպով է անդրադառնում:

- Այո
- Ոչ
- Մասամբ

10. Ըստ Ձեզ ի՞նչը կնպաստի Կառավարման խորհրդի էլ ավելի արդյունավետ աշխատանքին:

_____

_____

2022թ. հունվար ամսին Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) դասավանդման որակի և արդյունավետության գնահատման ուսանողական հարցման վերաբերյալ

Որակի կենտրոնի կողմից իրականացվել է ուսանողական հարցում քոլեջում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ:Արդյունքները ներկայացված են ստորև՝աղյուսակի տեսքով.

		1-5 բալանոց համակարգ				
		5	4	3	2	1
1	Դասախոսը ներկայացնու՞մ է դասընթացի կառուցվածքը, դասավանդման, ուսումնառության և գնահատման եղանակները: (Պատ.137 ուսանող)	75 54,7%	39 28,5%	12 8,8%	7 5,1%	4 2,9%
2	Արդյո՞ք դասախոսը լսարանում կառավարում է ժամանակը և պլանավորում դասընթացը:(Պատ.138 ուսանող)	84 60,9%	22 15,9%	18 13%	7 5,1%	7 5,1%
3	Արդյո՞ք նյութը մատուցվում է պարզ, հասկանալի, հետաքրքիր և մատչելի: Օժանդակում է դասընթացի նյութը յուրացնելուն: (Պատ.138 ուսանող)	83 60,1%	28 20,3%	16 11,6%	6 4,3%	5 3,6%
4	Դասախոսը կիրառու՞մ է ինտերակտիվ մեթոդներ դասավանդման գործընթացում: (Պատ.138 ուսանող)	60 43,5%	35 25,4%	23 16,7%	10 7,2%	10 7,2%
5	Արդյո՞ք դասախոսը ուսանողներին հնարավորություն է տալիս իրեն դիմել լսարանից դուրս՝ դասընթացին առնչվող հարցերով: (Պատ.137 ուսանող)	101 73,7%	18 13,1%	8 5,8%	6 4,4%	4 2,9%
6	Դասախոսը խրախուսու՞մ է ուսանողների ինքնուրույն աշխատանքը: (Պատ.138 ուսանող)	86 62,3%	31 22,5%	10 7,2%	5 3,6%	6 4,3%
7	Դասախոսը օբեկտի՞վ է և ուսանողներին գնահատու՞մ է սահմանված չափանիշներով: (Պատ.138 ուսանող)	77 55,8%	34 24,6%	16 11,6%	4 2,9%	7 5,1%
8	Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում վճարել եք գնահատականի (ստուգարքի) համար: (Պատ.137 ուսանող)	Ոչ 135 98,5%			Այո 2 1,5%	
9	Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել մասնավոր հիմունքներով պարապել՝գնահատականի (ստուգարքի) համար: (Պատ.138 ուսանող)	Ոչ 125 90,6%			Այո 13 9,4%	
10	Լսարանում դասախոսը կարգապահությունը պահու՞մ է ըստ պատշաճ մակարդակի: (Պատ.138 ուսանող)	70 50,7%	33 23,9%	18 13%	7 5,1%	10 7,2%
11	Դասախոսը բարիացակա՞մ է և հարգալից ուսանողների հանդեպ: (Պատ.138 ուսանող)	84 60,9%	30 21,7%	14 10,1%	4 2,9%	6 4,3%
12	Կցանկանայի՞ք մասնակցել տվյալ դասախոսի կողմից դասավանդվող մեկ այլ դասընթացի:(Պատ.139 ուսանող)	Ոչ 47 33,8%			Այո 92 66,2%	

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (ԱՊԷՔ) ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի արդյունքների վերաբերյալ

2022-2023 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ

Չափանիշ 1 (1.1.1.),(1.1.3)

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ԱՊԷՔ-ին հատկացված տեղերի, քոլեջում ձևավորվել է ընդունող հանձնաժողով, ովքեր իրականացրել են 2022-2023 ուս.տարվա դիմորդների ընդունելությունը: Նախարարության կողմից հատկացվել է 137 տեղ 7 մասնագիտությունների համար, մեկ մասնագիտությամբ քոլեջը առաջին անգամ է առկա ուսուցման եղանակով ընդունելություն կազմակերպել, այդ մասնագիտությունը՝ «Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում»-ն է: Տվյալ մասնագիտությամբ քոլեջը իրականացրել է ընդունելություն միայն հեռակա ուսուցման եղանակով: Հատկացվել է նաև 20 տեղ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության համար, որը ներդրվել է քոլեջում փորձարարական կարգով 2021-2022 ուսումնական տարվանից և համարվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր:

ԱՊԷՔ -ում 2022-2023 ուս.տարվա ուսումնական գործընթացների իրականացման համար համալրվել է դասախոսական կազմը, որոնց մի մասը ընդունվել է աշխատանքի՝համատեղությամբ:

Որպես ընդունող հանձնաժողովի քարտուղար՝ ընտրվել է քոլեջի կրթության որակի պատասխանատուն: Ընդունող հանձնաժողովի քարտուղարի և կարիերայի պատասխանատուի անհատական խորհրդատվության արդյունքում ապահովվեց դիմորդների կայուն հոսքը: Կարիերայի պատասխանատուի կողմից մշակվել է դիմորդի հարցաշար և կատարվել է հարցաշարի վերլուծություն, որը ներկայացված է ստորև:

2022-2023 ուս. տարվա ընդունելության արդյունքում քոլեջ ընդունվել են 126 սովորողներ: Դիմորդների համար Կարիերայի կենտրոնի կողմից մշակվել է «Դիմորդի հարցաշար», որը լրացվել է 93 դիմորդի կողմից:

Դիմորդի հարցաշարը վերլուծելիս պարզ դարձավ, որ Աբովյանի պետական էներգետիկական քոլեջն ընտրել են դիմորդների 3.2 %-ը բնակավայրին մոտ լինելու պատճառով, 10.7%-ը՝ նախընտրելի մասնագիտության շուկայում պահանջված լինելու փաստը հաշվի առնելով, 12.9%-ը՝ ԲՈՒՀ-երում շարունակական կրթությունը ապահովելու քոլեջի կողմից տրվող հնարավորության համար, 22.6%-ը՝ դպրոցից հետո շարունակական կրթություն ապահովելու համար, 18.3%-ը՝ ծանոթի, բարեկամի կամ ծնողի խորհրդով, 21.5%-ը՝ Կարիերայի ուղղորդման պատասխանատուի կողմից տված խորհրդատվության արդյունքում, 7.5%-ը չեն պատասխանել հարցին, 3%-ը՝ այլ պատճառներով:



Այն հարցին, թե որտեղից են տեղեկացել քոլեջի մասին, դիմորդների 29%-ը պատասխանել է քոլեջի կողմից դպրոցում իրականացված շրջայցի միջոցով, 9.7%-ը նշել է պաշտոնական և սոցիալական կայքէջերի միջոցով, 62.4%-ը շրջապատող անձանց միջոցով:



Ինչպես նաև, այն հարցին, թե մասնագիտական խորհրդատվություն և կողմնորոշում որտեղ են ստացել, պարզ դարձավ՝ 10.8%-ը ստացել է դպրոցում, 10.9%-ը՝ քոլեջում (Կարիերայի կենտրոնի և ընդունող հանձնաժողովի կողմից), 22.6%-ը նշել է ծնողի խորհրդով, իսկ 57%-ը ինքնուրույն է որոշում կայացրել:



Այսպիսով հստակ մասնագիտության ընտրության հարցում դիմորդների 61.3%-ը որոշում է կայացրել ինքնուրույն, 23.7%-ը ընտրել է ծնողի խորհրդով, 10.8%-ը որոշել է քոլեջում ստացած խորհրդատվության արդյունքում, 2%--ի որոշման վրա ազդել են իրեն շրջապատող անձինք, 3 %-ի դեպքում՝ տվյալ մասնագիտությամբ աշխատող անձինք:



Ամփոփելով հարցաշարի արդյունքները դիմորդների 75.3%-ը “10/10”, 11.8%-ը “10/9”, 8.6%-ը “10/8” և 3.2%-ը “10/7” գնահատել են քոլեջում Կարիերայի ուղղորդման պատասխանատուի իրականացրած խորհրդատվությունը:



Չափանիշ 2 (4.1.1, և 4.1.2)

Կառավարման համակարգի պարբերաբար գնահատումը իրականցվել է որակի կենտրոնի կողմից:Գնահատման արդյունքների վերլուծությունը ներկայացված է հաշվետվության 15-18 էջերում:

Չափանիշ 3 (3.1.) և (3.2.1)

Ուսումնական մասի կողմից մշակվել է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության, դրանց գնահատման ու մշտադիտարկման ընթացակարգ :

Ուսումնական մասը մշակել է «Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում» մասնագիտության կրթական ծրագիրը, հիմնավորել է յուրաքանչյուր բաղադրիչի բովանդակությունը, ինչպես նաև հստակեցվել է բաղադրիչների ձևավորման մոտեցումները, որի արդյունքում քոլեջն ունի հիմնավորված բաղադրիչներով մասնագիտական կրթական ծրագիր:

Չափանիշ 4 (4.2.1 և 4.2.2)

Կարիերայի կենտրոնը սերտ համագործակցում է շրջանավարտների և ուսանողների հետ:Կարիերայի պատասխանատուի վերահսկողությամբ ստորաբաժանման գործառույթները մասամբ հանձնարարվում է ուսանողներին, որի արդյունք նկատվում է կենտրոնի աշխատանքի արդյունավետության բարձրացում:

Չափանիշ 5 (5.1.1 և 5.1.2) և (5.2.1)

Քոլեջում իրականացվել է դասախոսների կարիքների վերհանման գործընթացը կրթության որակի պատասխանատուի կողմից, որի արդյունքները ներկայացված են հաշվետվության 5-7 էջերում:Իրականացվել է նաև ֆոկուս խմբի հանդիպումը դասախոսական անձնակազմի հետ, որի վերլուծությունը ներկայացված է հաշվետվության 12-14 էջերում:

Քոլեջում կատարվել է դասախոսական կազմի շարժի հետ կապված աշխատանքների հստակեցում, որի արդյունքում արձանագրվել են հետևյալ տվյալները.

Վերլուծելով դասախոսների ներքին և արտաքին հոսունության տվյալները, պարզ դարձավ, որ 2021 ուս.տարվա սեպտեմբեր ամսվա դրությամբ դասախոսական անձնակազմի թվաքանակը՝ 38 էր, որից 35-ը՝ հիմնական, 3-ը՝ համատեղությամբ: Համեմատելով 2022 ուս.տարվա սեպտեմբեր ամսվա դրությամբ դասախոսական անձնակազմի թվաքանակի

արդյունքները, գրանցվել է դասախոսական անձնակազմի կայուն ներհոսք, որը կազմել է դասախոսական հիմնական կազմի 22%-ը (43):Նոր ընդունված դասախոսներից 5-ը մասնակցել են քոլեջի կողմից կազմակերպված մրցույթին, բավարարել են մրցույթի պահանջներին, իսկ 3 դասախոսներ ընդունվել են աշխատանքի՝ համատեղությամբ:

Քոլեջի դասախոսական անձնակազմը միշտ պատրաստակամ մասնակցում է ԿԳՄՍ նախարարության և այլ կառույցների կողմից առաջարկվող և կազմակերպվող բոլոր վերապատրաստումներին: Վերջին վերապատրաստմանը՝ «Փափուկ հմտությունների առցանց դասընթաց ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների դասախոսական անձնակազմի համար», որը տեղի է ունեցել նոյմբեր- դեկտեմբեր ամիսներին, մասնակցել է դասախոսական անձնակազմի 65%-ը:

Չափանիշ 8 (8.1.1) և (8.1.2)

Ուսումնական մասի կողմից մշակվել է ուսանողների շարժը և առաջադիմության հաշվետվության ամփոփ ձևեր (գրաֆիկական և աղյուսակային) ըստ մասնագիտությունների և կուրսերի, որոնք տեղադրված են ԱՊԷՔ-ի պաշտոնական էջում:(www.apeq.am)

http://www.apeq.am/files/6cf6144072485c00f0c1e0561a00695d.pdf
3dc7aade5931964a1d1c8fd2fd0d6032.pdf (apeq.am)

Մշակվել է հավետվություն միջոցառումների մասին ուսանողների մասնակցությամբ և ըստ նպատակային նշանակության: ԱՊԷՔ-ի 2022-2023թթ. ուս. տարվա ընթացքում ուսխորհրդի արձանագրություններով հաստատված միջոցառումները հետևյալն են.

1. «Գիտելիքի օր»
2. «Ուսուցչի օր»
3. «Դիմակահանդես»

Կազվակերպված յուրաքանչյուր միջոցառում ունեցել է իր խնդիրներն ու նպատակները.
1.Ուսանողների մեջ բարձրացնել կրթության դերն ու նշանակությունը:
2.Ներդաշնակ մթնոլորտ ստեղծել ուսանող-դասախոս հարաբերություններում:
3.Օգնել ուսխորհրդին ուսանող-դասախոս-ուս.խորհուրդ համագործակցությամբ միջոցառում կազմակերպել:

Չափանիշ 9 (9.2.1) և (9.2.2)

Արտաքին կապերի ամրապնդման միջոցով Քոլեջի ճանաչելիության մակարդակի բարձրացման նպատակով Կարիերայի կենտրոնը սոցիալական հարթակներում (2019թ.ի արդյունքներով եղել են 280 հետևորդներ, 2023թ.-ի դրությամբ՝ 800 հետևորդներ)՝ գովազդային հոլովակների տեսքով, դպրոցներում՝ շրջայցերի, մի շարք անհատական խորհրդատվությունների միջոցով, կատարվել են աշխատանքներ, որի արդյունքում քոլեջը ձեռք է բերել ճանաչելիության որոշակի մակարդակ: Կարիերայի կենտրոնի և մի շարք այլ կազմակերպությունների միջև համագործակցության արդյունքում քոլեջի սովորողների մի մասը մասնակցել է նաև կամավորական աշխատանքների, աշխատել են խոցելի խմբի երեխաների հետ:

Չափանիշ 10 (10.3.1)

Որակի կենտրոնի կողմից մշակվել է որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականություն և կարգ:

Մշակվել է նաև դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆոկուս խմբի անդամների և ԱՊԷՔ-ի ուսանողների հանդիպումից կազմած եզրակացությունը հետևյալն է՝ կա խստության պակաս քոլեջի բոլոր օղակների կողմից, որի արդյունքում ունենք անհարգելի բացակայությունների որոշակի թիվ, ամենօրյա անհարգելի ուշացումներ:

Գնահատման հարցաթերթիկները կրում են ձևական բնույթ, ուսանողների կողմից նման գնահատման միջոցը լուրջ չի ընդունվում:

Ուսանողները նախընտրում են ուսումնառության նյութերը ունենալ թելադրման միջոցով: Պրակտիկաների ժամաքանակի ավելացման անհրաժեշտություն է նկատվում, ինչպես նաև անհրաժեշտություն կա գործնական աշխատանքների և գործնական պարապունքների ավելացման:

Քոլեջում ուսանողական խորհուրդը իր պարտականությունների և իրավասությունների շրջանակներում բավարար չափով տեղեկացված չէ ուսանողների խնդիրների մասին, չի կրում պատասխանատվություն խնդիրները վեր հանելու և դրանց լուծումները գտնելու հարցում:

Ֆոկուս խմբի անդամների և դասախոսական անձնակազմի հետ հանդիպումից կայացրած եզրակացությունը հետևյալն է՝ քոլեջում առկա է ուսանողների անհարգելի բացակայությունների և ուշացումների որոշակի տոկոս:

Գնահատման թերթիկների նկատմամբ անվստահություն, որպես գնահատման միջոց:

Ունենալով բարձր որակավորմամբ, իրենց աշխատանքի գիտակ, ինչպես նաև մասնագիտական փորձ ունեցող դասախոսական անձնակազմ այս բոլորի հետ միասին նկատվում է խստության պակաս:

Ինչպես ուսանողները, այնպես էլ դասախոսական կազմը բավարարված չէր ուսանողական խորհրդի ակտիվությունից:

Ֆոկուս խմբի անդամների և կառավարման խորհրդի ներքին շահակիցների հետ հանդիպումից կայացրած եզրակացությունը հետևյալն է՝ ԱՊԷՔ-ի կառավարման խորհուրդը լինելով բարձրագույն կոլեգիալ մարմին իր իրավասությունների շրջանակներում ապահովում է նիստերի թափանցիկությունը:

Որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում արտաքին և ներքին շահակիցների կարիքները, կարծիքները և առաջարկները: Վերլուծությունից պարզ դարձավ, որ խորհրդի յուրաքանչյուր անդամ ակնկալում էր մյուս անդամներից առավել ակտիվ մասնակցություն խորհրդի նիստերում:

ԱՊԷՔ-ի կրթության որակի պատասխանատուի կողմից մշակված հարցաշարերի վերլուծությունից արված եզրակացությունները հետևյալն են՝

Քոլեջի կառավարման խորհուրդը լինելով բարձրագույն կոլեգիալ մարմին պատշաճ կերպով անրադառնում է ռազմավարական խնդիրների հաղթահարմանը:

Կառավարման խորհրդի նիստերը տեղի են ունենում ըստ կառավարման խորհրդի կանոնակարգի, անհրաժեշտության դեպքում հրավիրվում են արտահերթ նիստ:: Տվյալ նիստի օրակարգի մասին նախապես տեղեկացվում են խորհրդի մյուս անդամները:Նիստի ներկա գտնվող յուրաքանչյուր անդամ արտահայտում է իր տեսակետը տվյալ հարցի և օրակարգի վերաբերյալ: Եվ յուրաքանյուր անդամի կարծիք կամ արված առաջարկ միշտ հաշվ են առնվում: Կառավարման խորհուրդը ապահովում է կայացրած որոշումների թափանցիկությունը, որոշումները ընդունվում են քննարկումների արդյունքում ,կարծիքներ և առաջարկներ լսելուց հետո: Նիստում կայացրած որոշումների մասին տեղեկացվում են համապատասխան ստորաբաժանումները:

Ըստ հարցաթերթիկի վերլուծության կառավարման խորհուրդը լիարժեք կարողանում է լուծել իր առջև դրված խնդիրները:

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման հարցաթերթիկի վերլուծությունից պարզ դարձավ, որ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 52% կարիք ունեն հայալեզու մասնագիտական գրականության և դիդակտիկ նյութերի:

Մասնագիտական վերապատրաստման կարիք ունեն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 48%-ը:Հարցաթերթիկի վերլուծությունից պարզ դարձավ, որ քոլեջում օտար լեզվի (անգլերեն) իմացության մակարդակ թե՛ գրավոր և թե՛ բանավոր շատ ցածր է: Օտար լեզվի (անգլերեն) գերազանց տիրապետում է դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընդամենը 6%-ը:

Շրջանավարտների հարցաթերթի վերլուծությունից արված եզրակացությունները հետևյալն են՝ ԱՊԷՔ-ի շրջանավարտնեի մեծ մասը ուսումը շարունակելու է բարձրագույն ուս.հաստատություններում:

Քոլեջը ուսանողների համար ստեղծել է նպաստավոր պայմաններ ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Քոլեջի գրադարանային ֆոնդը օգնում է ամրապնդել ուսանողի քոլեջում ստացած գիտելիքը և դասախոսական կազմի կողմից տրված գիտելիքները շրջանավարտին բավարարում են աշխատաշուկայում լինել մրցունակ, սակայն դրա հետ մեկտեղ ժամանակակից մասնագիտական կաբինետների և դիդակտիկ նյութերի անհրաժեշտություն է նկատվում:

Քոլեջի կողմից պրակտիկաները կազմակերպվել են պատշաճ կերպով, կազմակերպված պրակտիկաները ամրապնդել են ուսանողի մոտ քոլեջում ստացած տեսական գիտելիքները, օգնել են ուսանողին զարգացնել գործնական կարողությունները: Հարցմանը մասնակցած շրջանավարտների համար քոլեջի կողմից կազմակերպված պրակտիկաների տևողությունը բավարար են համարվել:

Քոլեջի բոլոր ստորաբաժանումները, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի յուրաքանչյուր անդամ, իր պարտականությունների և իրավասությունների շրջանակում լուծել է շրջանավարտների մոտ ուսումնառության ընթացքում առաջացած հարցերը և խնդիրները:

Կատարող՝ Ս. Եպիսկոպոսյան

Տնօրեն՝ Գ. Մեհրաբյան